

Հաստատումներ

ՀՀԷՆ Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի տնօրեն \_\_\_\_\_ Ս.Յ.Մարկոսյան «04» նոյեմբերի 2022 թ.



**ԿԱՐԾԻՔ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

*Նոննա Մուշեղի Գրիգորյանի «Ականաճանճերի (Diptera, Agromyzidae) ֆաունան և Էկոլոգիան Արցախի Հանրապետությունում» թեմայով Գ.00.08 «Կենդանաբանություն. մակարուծաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ, կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ*

Նոննա Մուշեղի Գրիգորյանի «Ականաճանճերի (Diptera, Agromyzidae) ֆաունան և Էկոլոգիան Արցախի հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը նվիրված է Արցախի Հանրապետությունում Agromyzidae ընտանիքին պատկանող երկթև միջատների ուսումնասիրությանը: Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ միջատների այս խումբը բավարար չափով ուսումնասիրված չի ոչ Արցախի Հանրապետությունում, ոչ Հայաստանում, ոչ էլ Կովկասի տարածաշրջանում:

Նոննա Գրիգորյանի կողմից ներկայացված ատենախոսությունը շարադրված է 147 էջի վրա: Այն կազմված է ներածությունից, 5 գլուխներից, ամփոփումից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատությունն ընդգրկում է 28 նկար, 7 աղյուսակ և համապատասխանում է ատենախոսական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Օգտագործված գրականության ցանկը ընդգրկում է 182 անուն հայրենական և արտասահմանյան գրականություն: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են 8 գիտական աշխատանքներում:

Ներածությունում ատենախոսը ներկայացնում է աշխատանքի արդիականությունը, հետազոտության նպատակը և ինդիքները, ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, աշխատանքի փորձաքննությունն ու հրապարակումները:

Աշխատանքի նպատակն է եղել հետազոտել ականաճանճերի ֆաունան և էկոլոգիան Արցախի Հանրապետությունում:

Այս նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Արցախի Հանրապետությունում տարածված ականաճանճերի տեսակային կազմի, ձևաբանական և ձևաչափական առանձնահատկությունների պարզաբանում,
- Արցախի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններում ականաճանճերի կենսաբանական առանձնահատկությունների, տարածվածության, գոտիական բաշխվածության ուսումնասիրում,
- Արցախի Հանրապետությունում տարածված ականաճանճերի տեր-բույսերի տեսակային կազմի, առավել վնասատու ականաճանճերի տեսակների հետազոտում,
- ականաճանճերի ականների տիպերի, ականաճանճերով տեր-բույսերի վարակի բնույթի և հասցված վնասի պարզաբանում,
- ականաճանճերի բնական թշնամիների՝ մակաբույծների ուսումնասիրում:

Հետազոտությունների արդյունքում հեղինակի կողմից առաջին անգամ բացահայտվել է ականաճանճերի տեսակային կազմը, որն ընդգրկում է 6 ցեղի պատկանող 16 տեսակ, ականաճանճերի, տեր-բույսերի 45 տեսակ, որոնցից 15-ը՝ վայրի դեղատու, 13-ը՝ բանջարաբոստանային, 12-ը՝ վայրի խոտաբույսեր են, իսկ 5-ն ունեն գեղագիտական նշանակություն: Ըստ կերաբույսերի պոլիֆագ են 4, օլիգոֆագ՝ 10, մոնոֆագ՝ 2 տեսակ: Պարզաբանվել է ականաճանճերով բույսերի վարակի էքստենսիվությունը և ինտենսիվությունը, ըստ թրթուրների սնման առանձնահատկության տեր-բույսերի տերևների վրա գոյացրած ականների տեսակները՝ գծային, բծավոր, ոլորուն, սպիրալաձև, ականաճանճերի բնական թշնամիները՝ մակաբույծ թաղանթաթևերի (Hymenoptera: Braconidae, Eulophidae, Pteromalidae) 8 տեսակ, և նրանց զարգացման առանձնահատկությունները:

Պարզվել է, որ ականաճանճերի բոլոր ուսումնասիրված տեսակների մոտ լավ է արտահայտված սեռական դիմորֆիզմը՝ էգերի մարմնի և թևերի երկարությունը գերազանցում է արուներինը:

Հեղինակի կողմից ապացուցվել է, որ Արցախի Հանրապետությունում տարածված հասուն ականաճանճերի թևերի երկարությունը գրական տվյալների համեմատ զգալիորեն ավելի կարճ է:

Ըստ գոտիական բաշխվածության ականաճանճերն առավել տարածված են նախալեռնային և միջին լեռնային գոտիներում:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Արցախի Հանրապետության բնակլիմայական պայմանները» ներկայացնում է Արցախի Հանրապետության աշխարհագրական դիրքի, դրանց առանձնահատկությունների, բնակլիմայական պայմանների ամբողջությունը, ինչպես նաև հայկական լեռնաշխարհի ջրագրությունը, բուսական և կենդանական աշխարհը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Գրական ակնարկ»-ում տրվում է Agromyzidae ընտանիքի կարգաբանությունը, ենթաընտանիքների տարբերիչ առանձնահատկությունները, առաջին անգամ գրականության մեջ հիշատակվող, ինչպես նաև կոսմոպոլիտ և կարանտինային տեսակները: Ականաճանճերը հիմնականում տերևային վնասատուներ են, սակայն այս գլխում բերված են տեսակներ, որոնց թրթուրները սնվում են ծառերի կեղևի տակ, ինչպես նաև՝ խոտաբույսերի արմատների, ցողունների կամ սերմերի ներսում:

Ատենախոսության երրորդ՝ «Նյութը և մեթոդները» գլխում հեղինակն անդրադառնում է ականավորված տերևների և ընձյուղների հավաքի, լաբորատոր պայմաններում ականերից ստացված թրթուրների և հարսնյակների դաստիարակման ավանդական մեթոդներին: Հետազոտության համար ատենախոսը ընտրել է Արցախի Հանրապետության 6 ստացիոնար կետեր, ուսումնասիրվել է ականաճանճերի 722 առանձնյակ (312♂ և 410♀): Հասուն ականաճանճերի արտաքին ձևաբանական հատկանիշների, ինչպես նաև սեռական ապարատի ուսումնասիրումը կատարվել է Արցախի պետական համալսարանի կենսաբանության լաբորատորիայում:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ «Ականաճանճերի մորֆոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, տեր-բույսերը և տարածվածությունը Արցախում», կազմված է երկու հիմնական ենթագլուխներից: Առաջին՝ «Ականաճանճերի մորֆոֆիզիոլոգիական առանձնահատկությունները և տեր-բույսերը» ենթագլխում ներկայացված է հայտնաբերված 6 ցեղերին (*Agromyza*, *Ophiomyia*, *Amauromyza*, *Calycomyza*, *Liriomyza*, *Phytomyza*) պատկանող 16 տեսակների թվաքանակի և հավաքի վայրերի տեղորոշման GPS տվյալները, հասուն ականաճանճերի արտաքին մորֆոլոգիական և սեռական ապարատի նկարագիրը, տեր-բույսերը, տերևների մակերեսին գոյացրած ականների տեսակները, թրթուրների և հարսնյակների զարգացման առանձնահատկությունները, բույսերի վարակի էքստենսիվության և ինտենսիվության ցուցանիշները, տրվում է նաև յուրաքանչյուր տեսակի մորֆոմետրիկ չափումների վիճագրական վերլուծությունը:

Երկրորդ «Արցախի Հանրապետության ականաճանճերի տարածվածությունը և գոտիական բաշխվածությունը» ենթազխում հեղինակը տարբեր բարձրագիր գոտիներում կատարել է ականաճանճերի տեսակային կազմի և առանձին տեսակների քանակական վերլուծություն, ըստ որի ականաճանճերի տեսակային բազմազանությամբ աչքի են ընկնում նախալեռնային (400 – 610 մ) և միջին լեռնային (700 – 1100 մ) գոտիների կլիմայական պայմանները: Միջին լեռնային գոտում հանդիպում են ուսումնասիրված բոլոր 16 տեսակները, իսկ նախալեռնային գոտում՝ 13 տեսակ:

Աշխատանքի հինգերորդ գլուխում «Արցախի Հանրապետության ականաճանճերի մակաբույծները», ներկայացված են ականաճանճերի մակաբույծների 8 տեսակներ, նրանց զարգացման առանձնահատկությունները, որոշվել է մակաբույծներով վարակվածության աստիճանը և Արցախում հաճախ հանդիպող մակաբույծ թաղանթաթևերը:

Ատենախոսության արդյունքները ամփոփված են 7 եզրակացությունների տեսքով: Գրականության ցանկը լիովին համապատասխանում է ատենախոսության թեմային, որոնք բերված են համապատասխան հղումների տեսքով:

Աշխատանքն արժևորում են հասուն ականաճանճերի, մակաբույծ թաղանթաթևերի, ականաճանճերի արական սեռական ապարատի մակրոլուսանկարները:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և համապատասխանում են ատենախոսի առջև դրված խնդիրներին:

Սեղմագիրն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին:

**Ատենախոսության վերաբերյալ որպես դիտողություններ և առաջարկություններ՝** Միաժամանակ պետք է նշել, որ ատենախոսական աշխատանքում առկա են որոշ թերություններ ու բացթողումներ, որոնց վրա կցանկանայինք հրավիրել ատենախոսի ուշադրությունը.

1. Աշխատանքի 6-րդ էջում նշվում է, որ մոլախոտերը վարակող ականաճանճերի կիրառմամբ կարելի է առանց քիմիական նյութերի օգտագործման նվազագույնի հասցնել այս բույսերի վնասակար ազդեցությունը մշակովի բույսերի վրա: Մեր կարծիքով վերոնշյալը սխալ տեսակետ է, քանի որ մոլախոտային բույսերը հանդիսանալով ռեզերվատորներ այս վնասատուների համար, այդտեղ սնվելով ու բազմանալով, հետագայում ավելի մեծ թվաքանակով տեղափոխվում են գ/տ մշակաբույսերի վրա և զգալի վնաս են հասցնում դրանց:

2. Ատենախոսը աշխատանքում հաճախ նշում է «տեր-բույսեր» եզրույթը: Կարծում ենք, որ առավել ճիշտ կլիներ նշել «կերաբույսեր»:
3. Ատենախոսության մեջ 4-րդ գլխի 4.1. ենթագլխում ներկայացված է «Ականաճանճերի մորֆոֆիզիոլոգիական առանձնահատկությունները և տեր-բույսերը»: Աշխատանքը ավելի կշահեր, եթե ուսումնասիրվեին նաև արձանագրված տեսակների պտղաբերությունը, սերունդների զարգացման և դրանց կյանքի տևողությունը:
4. Աշխատանքի 5-րդ գլխում «Արցախի հանրապետության ականաճանճերի մակաբույծները» նշվում են պարագիտ և պարագիտոիդ եզրույթները առանց ֆունկցիոնալ տարբերությունները նշելու: Լավ կլիներ, եթե կազմվեին որոշիչ աղյուսակներ:
5. Տեքստում առկա են որոշ տեխնիկական թերություններ: Այսպես, «Օգտագործված գրականության ցանկի» թիվ 4 և 94 հաշվառման համարներով համապատասխանաբար նշագրված Գրիգորյան Ն.Մ., 2019 (Էջ 132) և Kabira P.N., 1985 (Էջ 139) հեղինակներով գրական աղբյուրները բացակայում են աշխատանքի տեքստային մասում, և հակառակը, տեքստային մասում ներկայացված Oldroyd, 1970 (Էջ 28), Chen-Wang, 2003 (Էջ 57 և 59), Wang, 2003 (Էջ 59), Новиков, 2008 (Էջ 28), Spencer, 1971 b (Էջ 53) հեղինակներով հղումները տեղ չեն գտել ատենախոսության օգտագործված գրականության ցանկում:

Ընդհանուր առմամբ կարծում ենք, որ արձանագրված թերությունները չեն սսեմացնում աշխատանքի նշանակությունը և պաշտպանության ներկայացված դրույթները կարելի է համարել հիմնավորված և գիտագործնական նշանակություն ունեցող:

#### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Նոնա Մուշեղի Գրիգորյանի «Ականաճանճերի (Diptera, Agromyzidae) ֆաունան և Էկոլոգիան Արցախի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունն ավարտված լիարժեք գիտական աշխատություն է, իր արդիականությամբ, փաստացի նյութի ծավալով, գիտական նորույթով, տեսական և կիրառական նշանակությամբ լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Նոնա Մուշեղի Գրիգորյանը արժանի է Գ.00.08–«Կենդանաբանություն. մակաբուծաբանություն. էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Սույն կարծիքը քննարկվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի գիտական խորհրդի 2022 թ. նոյեմբեր 4-ի նիստում, արձանագրություն թիվ 5:

Գիտ. խորհրդի նիստին ներկա էին՝

1. Տ.Յ.Մարկոսյանը - կենս. գիտ թեկնածու /նախագահ/,
2. Հ.Լ.Թերլեմեզյանը-գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր /փոխնախագահ/,
3. Վ.Լ.Հակոբյանը /գիտ.քարտուղար/ - անասնաբուժ. գիտ թեկնածու,
4. Խ.Վ.Սարգսյանը - անասնաբուժ. գիտ. դոկտոր,
5. Մ.Ա.Սարգսյանը - կենս. գիտ. դոկտոր,
6. Լ.Ս. Մինասյանը - գյուղ. գիտ. դոկտոր,
7. Լ.Հ.Աճեմյանը - կենս. գիտ թեկնածու,
8. Հ.Ե.Ոսկանյանը - անասնաբուժ. գիտ. թեկնածու
9. Ս.Ա.Խառատյանը- անասնաբուժ. գիտ. թեկնածու
10. Լ.Լ.Սիմոնյանը- անասնաբուժ. գիտ թեկնածու
11. Հ.Ռ.Վարդանյանը-կենս. գիտ.թեկնածու

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի փոխտնօրեն, գյուղատնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հ.Լ.Թերլեմեզյան

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի ավագ գիտաշխատող, կենս. գիտ. դոկտոր

Մ.Ա.Սարգսյան

Հ.Լ.Թերլեմեզյանի և Մ.Ա.Սարգսյանի ստորագրությունները հաստատում են՝

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոնի գիտ. քարտուղար, անասնաբուժական գիտ.թեկնածու



Վ.Լ.Հակոբյան